ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 պայմանագրում 2020 թվականի ապրիլի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 19-ի N 347-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում, աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում, գնման առարկայի անվան մեջ փոփոխությունների կատարում և բանկային վավերապայմանների փոփոխություն:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետը:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

16.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 գնման պայմանագրի

ք. Երևան .10. ապրիլի 2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Է. Քոչարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2020թ. N 347-Ն որոշումը և ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 16.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում <<ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգում>> բառերը փոխարինել <<ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցում>> բառերով.

բ) Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետն ավելացնել 91 օրացուցային օրով, որի հաշվարկը սկսվում է Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից.

գ) Պայմանագրի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի.

դ) Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում Կատարողի բանկային վավերապայմաններում <<<<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ, Վանաձորի մ/ճ Հ/Հ 16036026535100>> բառերը և թվերը փոխարինել <<<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, Վանաձորի մ/ճ Հ/Հ 2051422103891001>> բառերով և թվերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը՝ բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ՀՀ ԼՄ ք. Վանաձոր, Վարդանանց 17-5
կառավարական տուն 3	<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, Վանաձորի մ/ճ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2051422103891001
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 06933586
Հ/Հ 900011027639	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Է. Քոչարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
16.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 պայմանագրի
.10. ապրիլի 2020թ. կնքված N1 համաձայնագրի

<<Հավելված N 2
16.10.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի																		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019-2020 թթ.՝ ըստ ամիսների,այդ թվում՝															
			2019 թ.			2020 թ.												
			Նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	Նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**	**Ընդամենը 2019-2020 թթ.**
1	71241200/81	ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	2 200 000	2 200 000	**2 200 000**	-	-	-	6 600 000	6 600 000	6 600 000	6 600 000	6 600 000	6 600 000	6 600 000	6 600 000	6 600 000	**6 600 000**	**8 800 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ յուրաքանչյուր տարվա համար: >>*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027639
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ
ՀՀ ԼՄ ք. Վանաձոր, Վարդանանց 17-5
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, Վանաձորի մ/ճ
Հ/Հ 2051422103891001
ՀՎՀՀ 06933586

Տնօրեն՝

Է. Քոչարյան
(ստորագրություն)
Կ.Տ.